

## ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՐԱԳԼԻԻ ՏԱՐԵԹՎԻ ՀՇՏՄԱՆ ՀԱՐՑԸ



Ոմարագիտական աշխատություններից հայտնի է, որ ոչ մի դարագլուխ գիտականորեն հիմնավորված չէ, քանի որ նրանցից համարյա թե ոչ մեկը կապված չէ այս կամ այն ժողովրդի պատմական կյանքում տեղի ունեցած իրադարձության հետ: Վերջիններ, օրինակ, աշխարհի ստեղծման դարագլուխը:— Աղեքսանդրիական տոմարագետների հաշվով, Հուլիոս Աֆրիկացու վկայությամբ, ստեղծագործության դարագլուխը 5500 տարի է նախ քան մեր էրան: Հուլյների մոտ աշխարհի սկիզբը համարվում է 5508 տարի: Սկալիգերը, հին տեքստերի ուսումնասիրությունների վրա, որոշում է 3950 տարի: Պեարոնիուսը համարում է 5873 տարի, հրեական պատմության Հովսեփ Ֆլավիուսը՝ 4163 տարի: Իսկ, այսպես, նույն դարագլխի վերաբերյալ կարելի է բերել տասնյակ տարբեր թվականներ: Իհարկե, դրանցից ոչ մեկն էլ ճիշտ լինել չի կարող, ինչպես անվիճելի ցույց է տալիս ժամանակակից գիտությունը:

Ինչպես է սահմանվել հայկական թվականը:

Հայկական դարագլուխն օրհամանկու համար եղել են մի շարք հանգամանքներ, որոնց վրա մենք անհրաժեշտ ենք համարում կանգ առնել:

325 թվին նիկիա քաղաքում հրավիրված տիեզերական ժողովում քննության դրվեց Զատիկը տոնելու հարցը և որոշվեց Զատիկը տոնել զարնանային լիարժանի հաջորդ կիրակի օրը, որպիսզի քրիստոնեական Զատիկի օրը չհամընկնի հրեական Պասեքի օրվա

հետ: Պահանջ էր առաջացել կազմել զատկական օրերի ցուցակ հետագա տարիների համար: Այդ աշխատանքն իր վրա վերցրեց Անդրեաս Բյուզանդացին, որը կազմեց, այսպես կոչված, 200-ամյա աղյուսակը, որը և գործածվել սկսվեց 353 թվից: Անդրեասն իր աշխատության մեջ թույլ էր տվել մի սխալ. նրա աղյուսակը կազմված էր այնպես, որ ավարտվելուց հետո, նորից սկզբից գործածել անհնարին էր դառնում: Եթե նա կազմած լիներ 209 տարվա համար, ապա առանց փոփոխելու կարելի էր լիներ այդ աղյուսակը աշխատանքի դնել նորից:

553 թվին Անդրեասի ցուցակը լրացավ, և հենց այդ ժամանակ նկատեցին, որ Անդրեասը բաց է թողել 9 տարի, որի պատճառով, 553 թվականից ձևաբան շփոթիլ սուսք եւ ամենայն արհեստք տոմարականք:

Քրիստոնեական եկեղեցին չէր կարող անտարբեր գտնվել նման կառնաշփոթության հանդեպ, և այդ պատճառով հայկաբեցին հմուտ տոմարագետներից և աստղաբաշխներից մի համագտմար Աղեքսանդրիա քաղաքում: Այդ համագտմարի վերաբերյալ կան բազմաթիվ տեղեկություններ Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի հին հայկական ձեռագրերում: Բերում ենք միայն տոմարագետ Հովհաննես Սարկավազի տոմարական աշխատությունից մի հատված. «Ժողովեցան յԱղեքսանդրիա, ի մայրաքաղաքն եփպոսոսցոց, արքանուսեփք եւ իմաստասէրք ի լուսաց եւ յասորոց, ի հոռմայեցոց եւ յեփպոսոսցոց,

1, ա) «Պատմութիւն Հայոց արարեալ կիրակոսի Վարդապետի Դանձակեցոյ», Թիֆլիս, 1909 թ., Վենետիկ, 1845 թ., և բ) Ա. Աբրահամյան, «Տիեզերագիտություն և տոմար Անանիա Շիրակացու», Հայկոհրատ, Երևան, 1940 թ.:

թուով 16 (35): Եւ առաքեն յնրա աղէմ եւ կոշեն ինքեանս զՓենէհեզ՝ որ ազգաւ եբրայեցի էր եւ հաւատով քրիստոնեայ՝ եւ լինին 12 (36): Եւ գլուխ իմաստասիրաց եւ առաջնորդն էաս, որ բուն ազգաւ աղեքսանդրացի էր եւ հաւատով քրիստոնեայ: Կարգեցին եւ հաստատեցին բոլորակ ՇԼԲ (532) ամաց, որ կոչի Շ.եակ (500-եակ): Եւ գլուխ բոլորին հաստատեցին զԴ (4) ապրիլի ամսոյ: Եւ ունի ինքեան բոլորակն զընթաց արեգական, որ ԻԲ.եակ (28-եակ) կոչի եւ նահանջից նահանջ: Եւ զընթացս լուսնոյ ԹԺ.եակ (19-եակ) կոշեն...»<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, այդ համագումարը կանգ է առնում մի մեծ ժամանակաշրջանի, այն է՝ 532-ամյակի վրա, որը պարունակում էր թե՛ արեգական եւ թե՛ լուսնական շրջանները (28-ամյակ եւ 19-ամյակ, քանի որ՝  $28 \times 19 = 532$ ): Այդ համագումարը նույնպես կազմում է հաջորդ 532 տարիների համար զատկական օրերի ցուցակը, որը հետզհետեւ, 532 տարին լրանալուց հետո, պիտի նորից կրկնվեր:

Այդ համագումարի մասին խոսվում է Հայկ. ՍՍԻ Պետական մատենադարանի № 1973 ձեռագրում. «Բնակ այր տմն ի ճշմարտագունից տառամասիրաց յեզիպատական մայրաքաղաքէն Աղեքսանդրիա, էաս անուն կոշեցեալ, ձայն արկեալ առ փնք հաւաքէ զարս կորովամիտս՝ զԱղդայ ի Գամրաց, զՓենէհեզ ի Հրէաստանէ, զՅոհան յԱրաբիա, զՍերգ ի Մակեդոնիէ, զԳիգան յԱսորոց, զՈրիլ յԵվթորիա եւ այլ 12 (36) արամբք հաւատարմաւք. խորհին գտանել զգարձ արեգական եւ լուսնի ի միում ամի: Եւ գտանեն զայս լեալ ի ԻԲ ԹԺ.եակեալս յառն ՇԼԲ. եւ ասացին թուական հայոց Ժ, որով սահմանեցին ի շարժիլ թուականին երթեալ Թ եւ այլ ԺԹ, ԺԹ եւ Դ.ից ապրիլի ի գտանել զմուտ Շ.եկին»:

Այս ձեռագրում բերված փաստը համընկնում է Հովհաննես Սարկավագի հաղորդած տեղեկությանը, բայց մի տարբերությամբ, որ «եւ ասացին թուական հայոց Ժ» վերջինս չունի: Եվ դա ճիշտ է, որովհետեւ անհնար է որ սահմանվեր հայկական թվականի հարցը մի համագումարում, ուր չկային նույնիսկ Հայաստանի պատգամավորների կայացուցիչները:

Նման ժամանակաշրջան ընդունում է եւ մի ուրիշ հանձնաժողով, որը հենց նույն տարիներին գումարվում է Իոնիոն Բյուզանդացու նախագահությամբ եւ որը նույնպես կազ-

մում է զատկական տոների ցուցակը 532 տարիների համար:

Բայց եւ այնպես, կազմված երկու ցուցակներում նկատվում են որոշ տարբերություններ: Էասի հանձնաժողովը որոշում է՝ եթե դարնայային լիալուսինը համընկնի շաբաթ օրվա հետ, ապա հաջորդ օրը, կիրակին, Ջատիկ շպիտի համարել, այլ հետաձգել 7 օրով եւ Ջատիկը տոնել հետեւյալ կիրակի օրը, իսկ Իոնիոնի գլխավորած հանձնաժողովը որոշում է հենց հետեւյալ օրը, կիրակի, տոնել Ջատիկը:

Հայերից պատգամավորներ չէին մասնակցում հանձնաժողովներից եւ ո՛չ մեկում, բայց Հայկական Եկեղեցին տեղյակ էր այդ աշխատանքներին: Երկրում տեղի ունեցող դեպքերը նրանց հնարավորություն չէին տալիս զբաղվել տոմարական խնդիրներով: Հետագայում, Մովսես կաթողիկոսի օրոք միայն նրանք զբաղվեցին զատկական տոների հարցը կարգավորելու խնդրով:

Հենվելով Հովհաննես պատմաբանի (կաթողիկոսի) «Պատմութիւն հայոց»ի տեղեկությամբ, Մաղաբիա արքեպիսկոպոս Օրմանյանը իր «Ազգապատում» աշխատության մեջ գրում է հետևյալը. «Արդ, 561-ին կաթողիկոս էր Հովհաննես Գաբեղյան, 564-ին սկսան Սուրեն մարզպանի հարստահարությունները, 571-ին սկսավ Վարդանի շարժումը, 572-ին եղավ կաթողիկոսին փախուստը, հետևաբար պատմության համաձայն է ըսել թե մինչև որ Գաբեղյան պետք եղած տեղեկություններ ստանար, տոմարական խնդիրներով զբաղվելու առիթ չկարգավ գտնել, եւ զատկի տոները շարունակեցին առժամյա կերպով, առանց հաստատուն ցուցակի: Մովսես եղավ, որ հայրապետության բարձրանալն ետք, իրեն հատուկ նպատակ կազմեց զատկական տոնի կամ տոնական տոմարի գործը միանգամ ընդմիջտ կարգադրել, եւ Հայոց Եկեղեցվո համար հաստատուն կանոն մը ունենալ, առանց պետք ունենալու շարունակ օտարներու կարոտանալ...»

«Էսայան շրջանը կազմված էր արդեն, բավական էր զայն Հայ Եկեղեցվո համարացնել, տարեկան տոներն ալ ըստ այնմ կարգադրել, բայց պետք էր որ հոռմեական ամիսներով կազմված ցուցակը հայկական ամիսներով վերածվեր, միանգամայն հոռմեական նահանջավոր տարիներու հաշիվները փոխանցվեին հայոց շարժական տոմարին նահանջ չունեցող տարիներու վրա, հրամաձայն Հայկա շրջանին հաշիվներուն...»

2. Տե՛ս Հայկ. ՍՍԻ Պետական մատենադարանի ձեռ. № 1495, Հովհաննես Սարկավագի «Ճոմարը»:

«Ըստ այսմ ի հրամանն մեծին Մովսեսի բերթողը և գիտունը արվեստին գումարվեցան Դվնա հայրապետանոցը, զոր կրնանք իբր Դվնա Գ. ժողով ընդունիլ և 584 թվականին նշանակել: Հայոց գիտուններուն գլխավորն էր Աթանաս Տարոնեցի, Գլակա Ս. Կարապետի մայրավանդին առաջնորդը, որ էր տեղյակ տոմարի ամենայն ազգաց և առաջնորդեց բոլոր հաշվական գործողությունը: Ժողովին կողմն նախադասվեցավ էասի ցուցակը» (էջ 571—572):

584 թվին Դվինում հրավիրված ժողովը որոշեց հավանություն տալ էասի աշխատանքներին և ցուցակին: Դրա պատճառները պարզ են, քանի որ այն ժամանակ օրվա սկիզբը հաշվում էին նախորդ օրվա երեկոյան ժամը 6-ից և եթե շաբաթ օրը տեղի է ունենում լիալուսին, ապա ճիշտ կլինե՞ր Զատիկ համարել 7 օրից՝ հետևյալ կիրակին՝ շփոթելու համար: Իսկոնի ցուցակում հանդիպում ենք 532 տարում 4 նման դեպքերի, որոնք և կոչվեցին «ծռաղատիկ»:

Մովսես կաթողիկոսի ժամանակ էասյան ցուցակները հայկական իրականության հարմարեցնելու գործը հանձնարարվեց Աթանաս Տարոնեցուն, Գլակա Ս. Կարապետի մայրավանդին առաջնորդին, որը և կատարեց այդ աշխատանքը:

Պատմիչների և ուսումնասիրողների մի մասը ախալամբ Դվինի ժողովի գումարման թվականն են համարում 574ը: Իրականում, Դվինի այդ ժողովը գումարված է եղել ո՛չ թե 574-ին, այլ 584-ին: Այդ ապացուցվում է հետևյալ փաստերով.

1. Էասյան շրջանի ընդունելու տարում հին հայկական տոմարի ամսնորը տեղի է ունեցել հուլիսի 3-ին, իսկ եթե ժողովը գումարված լինե՞ր 574 թվին, ապա նա կլինե՞ր հուլիսի 6-ին:

2. Ձեռագրերում մատնանշված է, որ ժողովի տարին նահանջ տարի էր ըստ Հուլյան տոմարի, իսկ դա կարող էր լինել 584-ին և ո՛չ թե 574-ին:

3. Դվինի այդ ժողովի տարում Հայտնություն օրը տեղի է ունեցել հին Հայկական տոմարով արաց ամսվա 30-ին, որը նույնպես կարող էր լինել միմիայն 584 թվին:

Ինչպես տեսանք վերևում, Անդրեասի 200-ամյա ցուցակները սկսեցին գործադրվել 353 թվականի սկզբից և պիտի ավարտվեին 552-ի վերջում, այսինքն 553-ի սկզբից պիտի սկսեին գործադրել էասյան ցուցակները: Բայց Աթանասի առաջարկով Դվինի ժողովում որոշվեց 584 թվականը համարել էասյան շրջանի 33-րդ տարին,

նկատի ունենալով, որ Անդրեասյան ցուցակները վերջացել են 551 թվի վերջում:

Կանգ շառնելով տոմարական մանրակրկիտ հաշիվների վրա, մենք այստեղ կբերենք միայն մի փաստ, որը ցույց է տալիս, որ Աթանասը, իրոք, հարցին ճիշտ մոտեցում է ունեցել: Դա հետևյալն է.

Ըստ Հայկական հին տոմարի, 428 թվականը հանդիսացավ ապոկատաստազի տարի և, հետևաբար, այդ տարին համարվելով նահանջ տարի կամ, ինչպես անվանվում է Հայկի շրջանում՝ «նահանջից նահանջ» տարի, հերթական համար չպիտի ունենար, այսինքն բաց պիտի թողնվե՞ր Այլ խոսքով ասած, հաշիվը պիտի տարվե՞ր 425, 426, 427, և, 428-ը չհաշվելով որպես նահանջ, 429-ը անվանել 428 և այլն: Այդ հանգամանքը, որը բնորոշ է հին Հայկական տոմարին, հեղինակները մոռացության էին մատնել, իսկ Աթանասը, որպես հմուտ տոմարագետ, ճշտությունը պահպանելու համար, նկատի ունեցավ և մեկ տարով հետ տվեց բոլոր հաշիվները: Դվինի ժողովը նկատի ունենալով այդ բոլորը, որոշեց 584 թվականը համարել էասյան շրջանի 33-րդ տարին և ոչ թե 32-րդը: Այդ ժողովումն էլ որոշվեց 552-ից սկսել հայկական դարադրվելը:

Միջնադարյան հայկական մի շարք պատմիչներ չըմբռնելով Աթանասի աշխատության մեջ հաշիվ ընդունված նրբությունները, կոպիտ թվաբանական հաշիվներից ելնելով ( $352 + 200 = 552$ ), հայկական դարադրվել տարեթիվն են համարում 553-ից սկսած: Այդպիսիներն են՝ Ստ. Ասողիկը, Սամվել Անեցին, Կիրակոս Գանձակեցին և ուրիշները:

Հայոց պատմության ժամանակագրությունը ճշտելու համար, վերև բերված հաշիվը պիտի անպայմանորեն նկատի ունենալ: Տոմարական այդ սխալը ցույց տալու համար, բերենք հայկական պատմիչներից մի-երկու օրինակ:

Պատմիչ Արիստակես Լաստիվերտցյան, խոսելով արեգակի լսավարումներից մեկի մասին, գրում է. «Յամահանն արաց, յաւուրն ուրբաթու, ի դռնայ աւուրն, էր եւ թուականին մերոյ շրեքհարիւր ութսուն երկու ամս: Հատուկ տոմարական աղյուսակներով գտնում ենք, որ այդ տարին արաց ամսվա սկիզբը համընկել է Հուլյան տոմարի օգոստոսի 10-ին և տարվա վերադիրն է եղել ԺԳ (13) և յոթներյակը՝ Ա (1): Այդ տվյալներից ելնելով, որոշում ենք, որ օգոս-

տոսի 1-ին եղել է շորեքշաբթի և հետևաբար 10-ին կլինի ուրբաթ: Լուսնի ամսաթիվը կլինի՝  $13 + 10 + 7 = 30$ ,  $30 - 30 = 0$ , այսինքն՝ նորալուսին, քանի որ արեգակի խավարումները կարող են տեղի թանձնալ միմիայն նորալուսնի օրը, ուստի հաղորդված տեղեկությունը միանգամայն ճիշտ է: Այդ համեմատությամբ, «Տարեգիրք արարեալ Սմբատայ սպարապետի Հայոց» և «Պատմութիւն Մատթէոսի Ուհայեցւոյ» աշխատութիւններում նույն խավարման վերաբերյալ բերված տեղեկութիւնները ճիշտ չեն, քանի որ նրանք խավարման տարի են նշանակել 485-ը, որին ոչ օրն է համապատասխանում, ոչ լուսնի ամսաթիվը:

Ժամանակագիր Սամվել Անեցին հաղորդում է: «Երկու եղբարք, Սահակ եւ Յովսէփ կատարեցան վկայութեամբ, որք խմայելացիք էին՝ խոստովանելով զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին՝ ի քաղաքին Կարնոյ՝ յարաց ԺԵ (15), յաւուր Եշաբաթոս: Տարեգրութիւն վերցված է ըստ Քրիստոնեական տո-

մարի և ըստ հայկականի՝ 245: Տոմարական աղյուսակներով գտնում ենք, որ արաց ամսվա 15-ը համապատասխանել է Հուլյան տոմարի հոկտեմբերի 20-ին, իսկ հոկտեմբերի 1-ին եղել է կիրակի, ուստի և, 20-ին եղել է ուրբաթ և ոչ թե հինգշաբթի: Տարվա յոթներյակն է է (7): Սխալը ուղղվում է շատ հեշտ կերպով, միայն պիտի հիշել, որ Սամվել Անեցին հայկական դարազույն հաշվում է 553-ից, և, ըստ հայկականի, 797 թիվը՝ կհամարվի որպես 246-րդը: Այդ թվականի համար յոթներյակը կլինի 2 (6) և հոկտեմբերի 20-ին՝ հինգշաբթի: Այդպիսի օրինակներ շատ կարելի է բերել:

Այսպիսով՝

1. Հայկական դարազլխի տարեթիվ պիտի միշտ ընդունել 552-ի սկզբից.

2. Հայկական պատմիչների տվյալները միշտ անհրաժեշտ է ստուգել և ելնել այն հանգամանքից, թե տվյալ հեղինակը ի՞նչ հաշվով է մոտեցել հայկական դարազլխին:

